

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

2023 թ-ի մայիսի 31-ին կնքված N «ՀՀ ԱՄԷՀ ՔՏ ԳՀԾՁԲ 23/1» ծածկագրով պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Էջմիածին

«13» հունիսի 2023 թ.

Էջմիածնի համայնքապետարանի «Բարեկարգում» տնօրինությունը, ի դեմս տնօրեն Մ. Աբրահամյանի, որը գործում է տնօրինության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՄԱԼԿ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Սուքիասյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով «31» մայիսի 2023 թ. կնքված № «ՀՀ ԱՄԷՀ ՔՏ ԳՀԾՁԲ 23/1» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.8 կետերը, ինչպես նաև Կատարողի «12» հունիսի 2023 թ-ի N 60 գրությունը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՈՐԿԱԼ

1.1 Էջմիածին քաղաքի Ա. Մանուկյան 1-ին թաղամասի 3 փողոցների հիմնանորոգման նախագծա - նախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություններ) մատուցվում է սույն համաձայնագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

1.2 Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

1.3 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն համաձայնագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում Ծառայությունների հանձման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է 3 էջից, 3 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, Պատվիրատուին տրվում է երկու օրինակ, Կատարողին՝ մեկ: Սույն Համաձայնագրի N 1, հավելվածը հանդիսանում է սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

2.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Էջմիածնի համայնքապետարանի

«Բարեկարգում» տնօրինություն

Արմավիր, ք. Էջմիածին, Սուրբ Մեսրոպ Մաշտոց 0

Վաղարշապատի ՏԳԲ

Հ/Հ՝ 900322001018

Հ/Հ՝ 04/1468

Տնօրեն



Մ. Աբրահամյան

(ստորագրություն)

ԿՏ

ԿԱՏԱՐՈՂ

«ՄԱԼԿ» ՍՊԸ

Ք. Գյումրի, Տիգրան Մեծի 1

«Արարատբանկ» ԲԲԸ «Գյումրի» 2 մ/6

Հ/Հ՝ 1510052795500100

Հ/Հ՝ 05549897

Տնօրեն



Ա. Սուքիասյան

(ստորագրություն)

